ЛИТЕРАТУРА

1. *Бабаева А. Г.* В кн.: Цитологические механизмы гистогенезов. 242—244. М., 1979.
2. *Бахшинян М. З., Ноздрин В. И.* Биолог. ж. Армении, *34*, 1, 55—58, 1981.
3. *Бахшинян М. З., Ноздрин В. И., Азнаурян А. В.* Журн. экспер. и клинич. мед. *19*, 5, 19—25, 1979.
4. *Бахшинян М. З., Ноздрин В. И., Азнаурян А. В.* Журн. экспер. и клин. мед., *20*, 2, 143—146, 1980.
5. *Уайт А., Хендлер Ф., Смит Э., Хилл Р., Лескин И.* Основы биохимии. 3, 1759. М., 1981.

«Биолог. ж. Армении», т. XXXVI, № 5, 1983

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂՐԻ ԵՎ ՄԵՂՐԱՄՈՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԲԺՇԿԱՊԵՏ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԴԵՂԱՏՈՄՍԵՐՈՒՄ

Ա. Օ. ԴԱՍՊԱՐՅԱՆ

Հոդվածում, ձեռագրերի հիման վրա, ներկայացված է մեղրի և մեղրամոմի բուժական կիրառությունը՝ միջնադարյան հայ բժշկապետ Մխիթար Հերացու դեղատոմսերում։ Տարիների մեր պրպտումների շնորհիվ գտնվել ու օգտագործվել են այդ դեղատոմսերում առաջարկված բույսերը, ծաղիկները, արմատներն ու այլ նյութեր, որոնք մեղրի և մեղրամոմի հետ կիրառվելով կյանքում՝ ժողովրդական բժշկության մեջ տվել են բավական լավ արդյունք։

Բանալի բառեր. միջնադարյան դեղատոմսեր, մեղր, մեղրամոմ։

Հին և միջնադարյան հայ ժողովրդական բժշկության մեջ որպես դեղամիջոց, երբեմն առանձին, երբեմն էլ ուրիշ նյութերի հետ, դեղատոմսերում օգտագործվել է նաև մարդու փոքրիկ բարեկամի՝ մեղվի արտադրանքը՝ մեղրն ու մեղրամոմը, հաճախ էլ մեղվաթույնը։ Ինչպես վկայում են գրիչներն ու ժողովրդական բժիշկները՝ այն միշտ էլ բարերար ազդեցություն է ունեցել հիվանդի առողջական վիճակի վրա։

Մինչև XII դարը մեր ձեռքի տակ չենք ունեցել այնպիսի մեծածավալ աղբյուրներ, որոնցում մանրամասն շարադրված լիներ մեղվի աված բարիքների կիրառումը բժշկության մեջ, թեև մինչ այդ Հայաստանում գոյություն են ունեցել բժիշկներ ու հիվանդանոցներ, ինչպես նաև՝ բժշկություն, որոնց մասին վկայում է քերթողահայրը [1, էջ 279]։

Այժմ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում մոտ ութ հարյուր ձեռագիր բժշկարաններ կան, որոնցում հանդիպում ենք մեղրի, մեղրամոմի և մեղվաթույնի բաղադրությամբ դեղատոմսերի։ Այդ ձեռագրերից հնագույնը, որտեղ խոսվում է բժշկության մեջ մեղվի արտադրանքի կիրառման մասին, XII դարի բժշկապետ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» դիրքն է՝ գրված 1184 թվականին։ Ձեռագիրը հրատարակվել է 1832 թ., Վենետիկում, նույն խորագրով, որն այժմ պահվում է Մատենադարանի ձեռագրարանում՝ 416 համարի տակ։ Ութ հարյուր տարի առաջ բժշկության պատմության մեջ առաջինը եղել է բժշկապետ Մխիթար Հերացին, որն առաջարկել է պարզել, թե տվյալ հիվանդությունն ինչից է առաջացել, պարզել նրա պատճառները, այ-

սինքն՝ սխատորոշել հիվանդությունը, հետո միայն սկսել բուժումը։ Հենց այդպես էլ նա ուսուցանել է գալիք սերունդներին։

Իր դրքում Մխիթար Հերացին առաջարկում է զանազան հիվանդությունների դեղատոմսեր, որոնց մի զգալի մասի բաղադրության մեջ անպայման մտնում են մեղրն ու մեղրամոմը։ Այսպես, փորկապության, փորացավի, գլխացավի, այտուցման, ջերմերի, զանազան վերքերի, լյարդի, երիկամների և այլ հիվանդությունների դեպքում մեղվի արտադրանքը այս կամ այն համամասնությամբ մտել է դեղատոմսերի մեջ, մի բան, որը, հավանաբար, առընչություն ունի ժողովրդական բժշկության հետ և կիրառվում է մինչև օրս։

Մինչ իր դիրքը դրելը՝ Մխիթար Հերացին քաջատեղյակ է եղել Պորփյուրի, Արիստոտելի, Գալենոսի և էլի շատ ուրիշների բժշկական արվեստին, որոնց անունները վկայակոչում է իր դեղատոմսերում գրելով՝ «Գալենոս յիշէ», «Զաքարիան ասէ», «Մասուային որդին ասէ», «Բագարատ ասէ» և այլն։ Մխիթար Հերացին, ուսումնասիրելով այդ աշխատանքները, միաժամանակ բազմաթիվ փորձերի միջոցով գրել է հազարից ավելի դեղատոմսեր։ Օրինակ՝ հարվածի հետևանքով առաջացած այտուցը բուժելու համար Մխիթար Հերացին առաջարկում է օգտագործել մեղրամոմ. «Մոմ ձիթով հանապազ օծանէ և հանապազ եղկ ջրով ծեփէ. և առ գարեւ ալուր, և հուլպայ՝ որ է հացհամեմի ունդ, և տուպ. զայս զամէնս աղա և մաղէ, և շնխաղողի ջրով շաղուէ, և ի վերայ դիր» [2, էջ 75]։ Եվ իրոք, երբ ընկնելու կամ հարվածի հետևանքով մարդու մարմնի որևէ մասն այտուցվում է, այն անմիջապես իջնում է, երբ վրան դնում են մոմի, հացհամեմի սերմի, տուղտի, շնխաղողի ջրի և գարեւ ալյուրի շաղախը։

Մրսելու հետևանքով առաջացած մեկօրյա ջերմությունն իրոք, որ շատ հեշտ և արագ անցկացնում է գարեջրի, եփած մաղադանոսի արմատի, սամիթի արմատի կեղևի, մեղրի ու քացախի խառնուրդը. «Ապա թէ ի կարիք հասնի, գարեջուր տուր, եփած կարոսի տակ, և ըռաղիանի տակի կեղև՝ նուկի մի մեղրի սրբնճուպինով» [2, էջ 82]։

Մխիթար Հերացին պալզամի դեմ որպես ըմպելիք առաջարկում է. «Առ մեղրաջուր և ընդ դուփ այն խառնէ և տուր» [2, էջ 86]։ Մեղրաջուրն ու խնկաբեր թուփը մաքրում են լորձային արտադրությունը։

Կապի պատճառով առաջացած փորացավի դեմ Հերացին հանձնարարում է. «Առ մեղր և աղ և ճակնդեղի ջուր, և ընդ ներքոյ ի բան տար՝ օգտակար է» [2, էջ 87]։ Սա պալզամի հուկնայ է, որն իրոք օգնում է։ Կապի դեպքում օգնում է նաև ճակնդեղի 150 գ հյութի մեջ լուծված մեկ թեյի գդալ մեղրը։

Գլխացավի ժամանակ Հերացին խորհուրդ է տալիս եփել խնկաբեր թուփն ու գաղձը և խմել մեղրաջրով. «Առ սակաւ մի զուփայ և սակաւ մի լերին դաղձն՝ որ է քարաննուխն, զայսոնք եփէ մեղրաջրով, և քամէ և տուր որ խմէ» [2, էջ 100]։ Այն արագ անցկացնում է գլխացավը։

Մեղրով պատրաստած փափուկ դեղ է առաջարկում արյունախառն լորձային լուծը դադարեցնելու համար՝ դաղձը, քարավուզը, կղմուխը, երկար պղպեղը, սմպուլը մեղրով շաղել, տալ մաղադանոսի ջրով. «Առ անանուխ և քարաւէ եոթն-եոթն դրամ, դարապղպեղ երեք դրամ. զանճապիլ չորս դրամ. սումպուլ տասն դրամ. զայս զամէնս աղա և մաղէ, և յիստակած մեղրով շաղուէ և տուր կարոսի ջրով։ Բայց ի նոպայի օրն մի տար» [2, էջ 118]։ Միաժամանակ զգուշացնում է, որ դեղամիջոցը չի կարելի տալ ցավերի նոպայի ժամանակ։

Մխիթար Հերացու դեղատոմսերում տեղ է գտել նաև սևտայի սպեղանին։ Եթե հիվանդը ծեր է և այրվող ցավերով տաքություն ունի, ապա պետք է տալ՝ վարդը մեղրով, ձյութը և դաղձը, իսկ որպես խմիչք՝ մեղրաջուրը [2, էջ 188]։

Կոլնջի հիվանդության, ինչպես նաև ամեն տեսակ մաղձի դեմ. առաջարկված լավագույն բուժամիջոց է գինու մեջ եփած սերկևիլի կամ խնձորի հյութը, եփած և փրփուրն առած մեղրի խառնուրդը. «Առ սերկևիլ կամ խնձոր, կտրէ և եփէ գինւով. ծեծէ՝ որ ընդ մաղն ի վայր ելնէ, դրամակշեռ երեք հարիւր. առ մեղր և եփէ, և զուիրն առ վեցհարիւր դրամակշիռ» [2, էջ 148]։ Կյանքում այն կիրառել են և գոհ մնացել։

Բերանի, ստամոքսի, աղիքների ցավերի դեպքում խորհուրդ է տրվում արմավի ու քացախի խառնուրդի հյութը, մեղրի, կղմուխի, նուշի, սադաֆի հետ. «Առ ամրաւ ընտրած վաթսուն դրամ, լից ի վերայ բարակ քացախ գինւոյ վաթսուն դրամ, մեկ օրից ձեռոքդ ածէ, վաղէ, և քանի զիր չաքդ՝ սպիտակ մեղր, և զանազապիլ, սատափի տերև, նուշ, չորս-չորս դրամ մաեւորի և յաման դիր...»։ Ցավերի ժամանակ հանձնարարում է այդ բաղադրությունից ընդունել 4—5 գրամ, իսկ եթե կոլինջն ուժեղ լինի, ապա. «դու էօթն դրամ առ—օդնէ աստուծով» [2, էջ 149]։

Հայ ժողովրդի համար XII դարը եղել է ոչ միայն զարգացած մեղվաբուծության, այլև մեղվի ու մեղվի արտադրանքով բուժման միջոցների ստեղծման դար։ Մեղվի արտադրանքով մարդիկ բուժել են բազմաթիվ հիվանդություններ և վերքեր։ Մխիթար Հերացու մոտ կան հիանալի դեղատոմսեր, որոնք մինչ այսօր էլ օգտագործվում են և դրանցից շատերը հետ չեն մնում ժամանակակից դեղատոմսերից։ Սկսած XII դարից՝ մեղուն ու նրա արտադրանքը մուտք են գործել հայ բժշկության մեջ և իրենց ուրույն ու հաստատուն տեղն ունեն հայ և համաշխարհային բժշկության գանձարանում։ Եվ այսօր էլ, ինչպես վկայում են բազմաթիվ մասնագետներ, դժվար թե լինի որևէ հիվանդություն կամ վերք, որին ինչ—որ չափով չօգնեն մեղուն ու նրա արտադրանքը։ Տասնյակ տարիների մեր պրպտումները վերը նշված դեղատոմսերում առաջարկված բույսերն ու ծաղիկները, դրանց արմատներն ու կանաչ մասսան պարզաբանելու և դրանք ժողովրդական բժշկության մեջ կիրառելու համար՝ տվել են լավ արդյունք։ Այդ փորձված դեղատոմսերն այսօր էլ մենք համարձակ օգտագործում ենք որպես լավագույն դեղամիջոցներ։

Էթնոգրաֆիայի և հնագիտության
ինստիտուտ Հայկ. ՍՍՀ ԳԱ

Ստացված է 27. X. 1982

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913։
2. Մխիթար Հերացի «Ջերմանց Մխիթարութիւն», Վենետիկ, 1832։